Հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի
գիտական հարցերի գծով պրորեկտոր,
ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու
Ռաֆայել Բարխուդարյան

29 մայիսի 2026թ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՇԽԱՏԱՆՔՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻ

«ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՍԱՀՄԱՆԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ»

թեմայով

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի *Սահմանադրական իրավունքի ամբիոնը՝* մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի. գ. թ., դոցենտ Վ.Ն. Այվազյանի, ի.գ.թ., դոցենտ Հ. Ա. Ենգոյանի ի. գ. թ., դոցենտ Ռ. Ջ. *Մախմուդյանի*, ի. գ. թ. Ք.Ս. Ալեքսանյանի, ի. գ. թ. Տ.Գ. Նաղդալյանի, ի. գ. թ. Կ. Վ. Հակոբյանի, ի. գ. թ. Ն.Ա. Ավագյանի քննարկեց Լիլիթ Արմենի Ղազանչյանի՝ «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. Սահմանդրաիրավական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Լիլիթ Արմենի Ղազանչյանի ատենախոսությունը նվիրված է արդի իրավագիտության կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ անձի իրավական դրության համալիր հետազոտությանը և առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

Գրախոսվող դոկտորական ատենախոսության թեման արդիական է և պահանջված, քանի որ ժամանակակից համաշխարհայնացման պայմաններում անձի իրավական դրությունն ու վերջինիս տարրերի ձևավորման առանձնահատկությունները հանդիսանում են ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման ու կայուն զարգացման հիմնական նախադրյալները: Ավելին, իրավական դրությունը հանդիսանում է համախմբող, կարծրացնող հասկացություն, որը միահյուսում և համակարգում է «անձ-հասարակություն-պետություն» փոխհարաբերությունները: Իրենց հերթին, անձի իրավական դրության տարրերի տարաբնույթ դրսևորումներն, իրենց անմիջական ազդեցությունն են թողնում քաղաքացիական հասարակության, ակտիվ շարժումների ձևավորման և զարգացման վրա, որոնք էլ իրենց հերթին թելադրում են ժողովրդավարության դրսևորման առանձնահատկությունները տվյալ հասարակությունում և պետությունում:

Քննարկվող ատենախոսությունը հանդես է գալիս որպես անձի իրավական դրության հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման արդյունավետության բարձրացման նպատակով համակարգված և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների և դատական պրակտիկայում այդ խնդիրների լուծման բարձր պահանջվածության միջև հակասության հաղթահարման միջոց:

Աշխատանքի համալիր վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ գրախոսվող դոկտորական ատենախոսությունը, որը հանդիսանում է հեղինակի գիտական և պրակտիկ երկարատև աշխատանքի արդյունք, նվիրված է նաև անձի իրավական դրության ձևավորման և զարգացման համար հիմնարար ազդեցություն ունեցող հիմնական իրավունքների, ազատությունների, օրինական շահերի և պարտականությունների ամբողջության լիարժեք ուսումասիրությանը, դրանց իրացման առանձանահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև անձի իրավական դրության սկզբունքների և տեսակների բովանդակային յուրահատկությունների վերլուծությանը: Առանձնակի ուշադրության են արժանացել անձի քաղաքացիության սոցիալական և իրավաբանական բովանդակությունը և դրանց ուրույն կապը պետության հետ՝ հիմնված քաղաքացիության ինստիտուտի առկայության, անձի իրավունքների, ազատությունների ձեռքբերման և պարտականություններ կրելու առանձնահատկությունների վրա:

Դոկտորական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տասնութ ենթագլուխ պարունակող հինգ գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ***ներածության մեջ*** հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ-իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների հավաստիություն ու օբյեկտիվությունը, արդյունքների փորձարկումն ու դրանց ներդրումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքի առաջին՝ ***«Անձի իրավական դրությունը, որպես սահմանադրաիրավական գիտակարգ. մեթոդաբանական խնդիրներ»*** վերտառությամբ գլխում հեղինակը հանգամանորեն վերլուծել է անձի իրավական դրության տեսանկյունները՝ սահմանադրական իրավունքի հայեցակարգային մոտեցումների առումով, որի շրջանակներում ներկայացվել են «անձի իրավական կարգավիճակ» և «անձի իրավական դրություն» հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները, անձի իրավասուբյեկտիվության սահմանադրաիրավական էությունը և բովանդակային առանձնահատկությունները, վերջինիս կապը կամքի ազատության դրսևորման հետ, ինչպես նաև «իրավունակություն, գործունակություն և դելիկտաունակության» եռամիասնության դրսևորման փուլի առանձնահատկությունները: Առանձնակի ուշադրության են արժանացել անձի քաղաքացիության սոցիալական և իրավաբանական բովանդակությունը և դրանց ուրույն կապը պետության հետ՝ հիմնված քաղաքացիության ինստիտուտի առկայության, անձի իրավունքների, ազատությունների ձեռքբերման և պարտականություններ կրելու առանձնահատկությունների վրա:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. քննական և իրավահամեմատական վերլուծություն»*** վերտառությամբ, գլխում հանգամանորեն քննարկում են անձի իրավական դրության հայեցակարգային մոտեցումների զարգացման սոցիալ-իրավական հիմքերը, դրանց էական առանձնահատկությունները, ինչպես նաև ռուսական սահմանադրական ուսմունքներում անձի իրավական դրության վերաբերյալ տարաբնույթ մոտեցումները: Քննարկվող գլխի համատեքստում հեղինակն անդրադարձել է ինչպես խորհրդային ժամանակաշրջանի անձի կարգավիճակի վերաբերյալ իրավագաղափարական մոտեցումներին, այնպես էլ ՀՀ-ում իրավական համակարգի ձևավորմանը զուգընթաց՝ անձի իրավական դրության դոկտրինալ և օրենսդրական ամրագրման զարգացման գործընթացի առանձնահատկություններին:

Ատենախոսության երրորդ՝ ***«Անձի իրավական դրության համակարգային ամբողջականության բաղադրիչների դրսևորման առանձնահատկությունները»*** վերտառությամբ գլխում, բացահայտվում են անձի սահմանադրական (հիմնական) իրավունքների և ազատությունների էական հատկանիշները և բովանդակությունը, ինչպես նաև դրանց օրգանական կապը անձի իրավական դրության մյուս տարրերի հետ: Տվյալ համատեքստում հեղինակը լուսաբանում է «օրինական շահեր» և «անձի պարտականություններ» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը, դրանց փոխկապակցվածությունը արդի գլոբալ իրավական զարգացումների համակարգում: Ավելին, հեղինակը դիտարկում է սահմանադրությամբ ամրագրված անօտարելի արժանապատվությունը, որպես անձի իրավունքների և ազատությունների հիմք, այսինքն՝ սկզբնաղբյուր, որից բխում է անձի իրավական կարգավիճակն ամբողջ ծավալով:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է ***«Անձի իրավական դրության դրսևորումները, սկզբունքները և առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում»*** խորագիրը, լուսաբավում են անձի իրավական դրության տեսակների, սկզբունքների առանձհատկությունները, ինչպես նաև վերլուծության են ենթարկվում իրավական դրության հիմնահարցերը բազմազան և բազմատեսակ իրավակարգավորումների ոլորտում: Քննարկվող գլխի շրջանակներում հեղինակը անձի իրավական դրության սկզբունքները դիտարկում է որպես մեկ ամբողջական և միասնական համակարգ, որը կանխորոշում է անձի ոչ միայն իրավական, այլև փաստացի դրությունը տվյալ հասարակությունում:

Ատենախոսության հինգերորդ՝ ***«Անձի իրավական դրության սոցիալ-իրավական երաշխիքների համակարգը և դրա կատարելագործման հիմնախնդիրները արդի սահմանադրաիրավական զարգացումների տեսանկյունից»*** վերտառությամբ գլխում հեղինակը բազմակողմանի վերլուծության է ենթարկում սոցիալական երաշխիքների տեսակներն ու դասակարգման առանձնահատկությունները: Հեղինակը նաև շեշտադրում է, որ անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի լիարժեք իրացման համար անհրաժեշտ են իրավաբանական հատուկ երաշխիքներ, այսինքն՝ միասնական իրավական ձև ունեցող միջոցներ, որոնց նպատակն է՝ անմիջականորեն ապահովել իրավունքների, ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի իրավաչափ կիրառումը, դրանց իրական պահպանությունն ու պաշտպանությունը:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումներն ու առաջարկությունները:

Աշխատանքի դրական արժանիքներից է նաև այն, որ հեղինակը լիարժեքորեն է օգտագործել ազգային և միջազգային նորմատիվ-իրավական նյութերը տեսական-

մասնագիտական գրականությունը, դատական ակտերը, ինչի շնորհիվ հեղինակին հաջողվել է լիովին բացահայտել թեմայի էությունն ու բովանդակությունը, իսկ աշխատանքում ձևակերպված եզրահանգումներն ու գործնական առաջարկությունները ներկայանում են գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված: Հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում ներկայացված հետևություններն ու եզրահանգումները օժտված են գիտական և գործնական նշականությամբ և կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ պատկերացումների ընդլայմանը, ինչպես նաև հանդիսանալ տեսական և գործնական աղբյուր՝ հետագայում նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Այսպիսով, ատենախոսությունը լրացնում է սահմանադրական գիտության այն բացը, որը անձի իրավական դրության գնահատման համար սահմանադրական կարգավիճակի ընկալման նոր տեսական հիմնավորում և գիտական գործիքակազմ է պարունակում: Իր հերթին, հետազոտության իրականացման արդյունքում գիտական նորույթ պարունակող հիմնադրութերն ամփոփված են աշխատանքի պաշտպանության ներկայացվող դրույթներում, եզրակացություններում, տեսական հետևություններում և գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկություններում:

Դրական գնահատելով աշխատանքը, այնուհանդերձ անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 14-րդ կետի դրույթում հեղինակը նշում է, որ անձի իրավական դրության ներպետական երաշխիքների իրացման գործընթացում ներգրավված են պետական իշխանության բոլոր թևերը՝ օրենսդիր, գործադիր և դատական, սակայն չի հստակեցնում, թե վերոնշյալ իշխանության ճյուղերից առավել որոնք են անմիջականորեն ներգրավված անձի իրավական դրության տարրերի իրացան երաշխավորման գործընթացում, ինչը անորոշ է դարձնում տվյալ մարմինների ցանկը:

2. Ատենախոսը աշխատանքի 300-րդ էջից սկսած բավականին համակողմանի վերլուծում է անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորվածությանը, քանզի վերջինս հանդիսանում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական միջոց: Տվյալ համատեսքտում, հեղինակը անդրադառնում է ՀՀ-ում գործող Հանրային պաշտպանի ինստիտտուտի գործունեությանը ներկայացնելով ոլորտին առնչվող բարեփոխումներ: Մասնավորապես, ըստ ատենախոսի «*(...)Առաջարկում ենք ապահովվել իրավահավասարության սկզբունքի դրսևորումը սոցիալական երաշխիքների համատեքստում, օրենսդրորեն ամրագրելով հանրային պաշտպանների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները և հիմքերը, ինչպես նաև հաշվի առնելով Հանրային պաշտպանի*

գրասենյակի ծանրաբեռնվածությունը, որպես սոցիալական երաշխիքի իրականացում միջնորդել << կառավարությանը որոշ չափով սուբսիդացնել գրասենյակի ծախսերը, օրինակ՝ կրճատելով գրասենյակի կողմից վճարվող հարկերը:(...)» (էջ 307):

Հանգելով այսպիսի կարևոր առաջարկության, հեղինակը չի զարգացնում և չի հաստակեցնում արդյո՞ք գոյություն ունի նմանատիպ միջազգային փորձ, և հանրային պաշտապանի գործունեության ինչպիսի՞ խրախուսանքի տեսակներ օրենսդիրը պետք է սահմանի հանրային պաշտպանների նկատմամբ:

3. Աշխատանքի 3-րդ գլխի 2-րդ ենթագլխում վերլուծելով անձի արժանապատվության՝ որպես իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքի, կարևոր դերը անձի իրավական դրության կայացման և զարգացման գործընթացում, հեղինակը անդրադառնում է պետության կողմից անձի արժանապատիվ կյանքի երաշխավորման կարևորությանը: Այնուամենայիվ, հեղինակը չի բացահայտում «արժանապատիվ կյանք» հասկացության էությունը, վերջինիս փոխկապակցվածությունը անձի հիմանական իրավունքների և ազատությունների հետ, ինչը մեր կարծիքով, կարևորվում է արդի սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական զարգացումների համատեքստում:

Այնուամենայնիվ, մատնանշված նկատառումներն, ըստ էության, կրում են մասնակի և խորհրդատվական բնույթ, և չեն արժեզրկում հաջողված գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքները:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրներները: Աշխատանքը օժտված է գիտական արժանահավատ մակարդակով, աչքի է ընկնում մոտեցումների ու արդյունքների գիտական նորույթով, ունի ներքին միասնություն, համակարգվածություն, համալիրություն, հարուստ միջոլորտային աղբյուրագիտական հիմքեր:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Սեղմագրում լիարժեքորեն արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մենագրություններում և գիտական հոդվածներում: Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. Սահմանդրահիրավական հետազոտություն» թեմայով դոկտորական ատենախոսությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող ամբողջական, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն հետազոտոկան աշխատանք, որը ներառում է սահմանադրական իրավունքի,

օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող անձի իրավական դրության խնդիրների վերաբերյալ գիտական հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Լիլիթ Արմենի Ղազանչյանի «Անձի իրավական դրության հիմնախնդիրները. Սահմանդրաիրավական հետազոտություն» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել սահմանադրական իրավունքի ամբիոնի 2026 թ. մայիսի 26–ի նիստում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ
իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ **Վ.Ն. Այվազյան**

ԵՊՀ գիտական քարտուղար **Մ.Վ. Հովհաննիսյան**

29.05.26 թ.